Նախագահ
Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության
Առաջին Խորհրդական



Բարոյական քաջություն

Մահկանացու կյանքի նպատակներից մեկը Աստծուն ապացուցելն է, որ մենք կպահենք Նրա պատվիրանները, երբ դրա համար քաջություն է պահանջվում: Մենք այդ փորձությունն անցել ենք հոգևոր աշխարհում: Սակայն երկնային զորքերի մեկ երրորդը ապստամբեցին մահկանացու գոյությամբ փորձվելու այդ առաջարկի դեմ, որն իր մեջ ձախողվելու վտանգ էր պարունակում:

Նախքան մեր ծնվելը մենք անձնապես գիտեինք Հայր Աստծուն և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին: Մենք տեսնում և լսում էինք Նրանց, երբ Նրանք ուսուցանում և քաջալերում էին մեզ: Այժմ շղարշ է իջել մեր մտքի և հիշողության վրա: Սատանան՝ ստերի հայրը, առավելություն ունի, որովհետև մենք մեր ով լինելու մասին իրականությանը նայում ենք հավատքի աչքերով, մինչդեռ մեր մարմինները մեզ ենթակա են դարձնում մարմնական գայթակղությանը և ֆիզիկական թուլությանը:

Մենք մեծ օգնականներ ունենք, որոնք այս կյանքում մեզ քաջություն են պարգևում: Ամենամեծը Հիսուս Քրիստոսի Քավությունն է: Նրա արածի շնորհիվ, մեղքերը կարող են լվացվել մկրտության ջրերում: Մենք կարող ենք նորացնել այդ օրհնությունը՝ հավատքով և ապաշխարող սրտով ընդունելով հաղորդությունը:

Հոգևոր պարգևները նույնպես օգնության աղբյուր են: Մենք ի ծնե ստանում ենք Քրիստոսի Հոգին: Այն մեզ զորություն է տալիս իմանալու, երբ է մեր առջև ծառացած ընտրությունը մեզ դեպի հավերժական կյանք տանում: Սուրբ գրությունները վստահելի ուղեցույց են, երբ մենք կարդում ենք դրանք Սուրբ Հոգով՝որպես մեր ընկերակից:

Սուրբ Հոգին թույլ է տալիս, որ մենք շնորհակալություն հայտնենք և օգնություն խնդրենք աղոթքով՝ պարզ ու վստահորեն, ինչպես մի ժամանակ մենք հաղորդակցվում էինք մեր Երկնային Հոր հետ և ինչը մենք կվայելենք, երբ վերադառնանք Նրա մոտ: Աստծո հետ նման հաղորդակցությունը օգնում է փարատել մեր սիրտը պատող վախը, որը հավատք և սեր է զարգացնում Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ:

Սուրբ քահանայությունը մեզ քաջություն է պարգևում ծառայության մեջ: Քահանայության արարողություններով մենք զորություն ենք ստանում՝ ծառայելու Աստծո զավակներին և դիմակայելու չարի ազդեցությանը: Երբ Նա կանչում է մեզ ծառայելու, մենք պետք է հիշենք այս խոստումը. «Եվ որտեղ որ ձեզ ընդունեն, այնտեղ կլինեմ

նաև ես, քանզի ես կգնամ ձեր առջևից: Ես կլինեմ ձեր աջ կողմում և ձեր ձախ կողմում, և իմ Հոգին կլինի ձեր սրտերում, և իմ հրեշտակները՝ ձեր շուրջը, որ բարձրացնեն ձեզ» (ՎևՈւ 84.88):

Մարգարե Ջոզեֆ Սմիթը իր ծառայության մեջ վախենալու պատճառ ուներ: Սակայն Աստված նրան քաջություն տվեց, բերելով Վարդապետի օրինակը.

Եվ եթե քեզ գցեն հորը կամ մարդասպանների ձեռքը, և մահվան դատավճիռն անցնի վրայովդ. եթե քեզ գցեն ջրանդունդը. եթե բարձրացող ալիքը դավ նյութի քո դեմ. եթե կատաղի քամիները դառնան քո թշնամին. եթե երկինքները մթնեն, և բոլոր տարրերը համախմբվեն՝ ճանապարհը խոչընդոտելու. և այդ ամենից բացի, եթե դժոխքի ծնոտները լայն բացեն երախը, որպեսզի քեզ կուլ տան, իմացիր, որդի՛ս, որ այս բոլոր բաները փորձառություն կտան քեզ և կլինեն քո օգտի համար:

Մարդու Որդին իջել է այդ ամենից ցած: Մի՞թե դու ավելի մեծ ես, քան նա» (ՎևՈւ 122.8):

Աստված մեզ տվել է շատ ավելին, որպեսզի օգնի վանել վախը և քաջություն ունենալ՝ ինչ էլ որ պատահի կյանքում: Երբ մենք ձգտում ենք ստանալ Նրա օգնությունը, Նա կարող է բարձրացնել մեզ դեպի հավերժական կյանքը, որը փնտրում ենք:

Ինչպես ուսուցանել այս ուղերձից

Հիսուս Քրիստոսը՝ Վարդապետը, հաճախ է հարցեր տվել խրախուսելով մարդկանց խորհել և կիրառել Իր ուսուցանած սկզբունքները: . . . Նրա խոսքերը միտք, ինքնաքննում և պարտավորություն են հուշում» (*Teaching, No Greater Call* [1999], 68): Կարող եք տարբեր հարցեր կազմել և տալ՝ օգնելով մարդկանց հասկանալ և կիրառել այս ուղերձում ուսուցանվող ճշմարտությունները: Օրինակ, դուք կարող եք հարցնել. «Ինչպե՞ս է Աստված օգնել ձեզ՝ վանել վախը և քաջություն ունենալ», կամ «Ինչպե՞ս է Աստված օգնել ձեզ հաղթահարել ձեր վախերը»: Խրախուսեք անհատներին նախքան պատասխանելը մտածել իրենց պատասխանների վրա:

Երիտասարդներ

Ոչ ոք կատարյալ չէ

Շանա Սկուբի

Ես միշտ փափագել եմ լինել Նեփիի պես՝ խիստ հնազանդ, անչափ հավատարիմ և մեծապես հոգևոր: Ինձ համար Նեփին մեծահոգության գերագույն օրինակ է: Շատ քիչ բաներ կային, որ ինձ ավելի էին գրավում, քան մեծանալու հետ նրան նմանվելու միտքը կամ առնվազն ձեռք բերելու նրա գերազանցության գեթ մի մասը:

Մի օր ես մի փոքր դժվար իրավիճակում էի հայտնվել, որն իմ անհամապատասխանության զգացումների հետևանք էր: Ես շատ ձգտումներ և նպատակներ ունեի: Սակայն կարծես չէի հասնում որևէ մեկին: Հուսահատ արցունքներն աչքերիս ես իմ զգացումների մասին պատմեցի հայրիկիս: Նա արագ ոտքի կանգնեց, մոտեցավ իր պայուսակին և այնտեղից հանեց իր Մորմոնի Գիրքը: Առանց մի խոսք անգամ ասելու նա բացեց 2 Նեփի 4 գլուխը և սկսեց կարդալ հատված 17-ը:

Էլեկտրական հոսանքի պես սարսուռ անցավ մարմնովս այդ զորավոր խոսքերը լսելիս. «Ո՞վ թշվառ մարդ, որ ես եմ»: Մտքերս խառնվեցին: Ինչպե՞ս կարող էր Նեփին, իմ հերոսը և օրինակը, ասել, որ նա «թշվառ» էր: Եթե նա թշվառ էր, ուրեմն ի՞նչ էի ես:

Կրկին էլեկտրական հոսանք անցավ մարմնովս, երբ հայրս կարդաց հատված 28-ը. «Զարթնի՛ր, իմ հոգի: Այլևս մի՛ վհատվիր մեղքի պատճառով»: Կարծես միտքս պատող մութ ամպերը ցրվեցին, ամեն ինչ պարզվեց և իմ առջև բացվեց հոյակապ բաց կապույտ երկինքը ջերմացնող պայծառ արևով: Անհնար է նկարագրել, թե ինչպես այս հատվածը լուսավորեց հոգիս: Սուրբ գրության այս մի քանի հատվածները ինձ լցրեցին մեծ հույսով, ոգեշնչմամբ և ուրախությամբ:

Հատված 30-ում Նեփին ասաց այն, ինչ ես մտածում էի, սակայն ավելի պերճախոս ձևով. «Հոգիս կիրճվի քեզանով, ի՛մ Աստված և ի՛մ փրկության վեմ»: Այս հատվածը իր հետ բերեց խաղաղության և երախտագիտության զգացումներ Տիրոջ գորովագութ ողորմածության և սիրո հանդեպ:

Հայրս փակեց գիրքը և բացատրեց, որ այդ

հատվածները երբեմն կոչում են Նեփիի սաղմոս: Նա այնուհետև զգուշորեն ուսուցանեց ինձ, որ անգամ լավագույն մարդիկ երկրի վրա անկատար են, և այդ մարդիկ պետք է կամ գիտակցեն իրենց անկատարությունները, կամ լինեն հպարտությամբ լի, ուստիև չլինեն մեծություն:

Ես հասկացա: Քանի որ ես թուլություններ ունեի, չէր նշանակում, որ ես անկարող էի Նեփիի պես դառնալ: Իմ թուլությունները ընկալելը ինձ ավելի մոտեցրեց Նեփիի մեծությանը: Նեփին մեծ էր, որովհետև լինելով հնազանդ և հավատարիմ, նա խոնարհ էր և պատրաստ ընդունելու իր մեղքերը:

Այդ փորձառությունից հետո, ես բարձր գնահատեցի Նեփիի այդ խոսքերը: Ամեն անգամ դրանք կարդալիս, ես նույն ոգևորությունն ու ոգեշնչումն եմ ապրում, ինչպես երբ առաջին անգամ կարդացի դրանք: Այդ հատվածները երգում են ինձ համար, որ ես Աստծո դուստրն եմ, ունակ անելու ավելին, քան կարող եմ պատկերացնել: Ես գիտեմ, որ եթե ես հավատարմորեն առաջ գնամ, աննկարագրելի օրհնություններ են պահված ինձ համար:

Երեխաներ

Մեզ քաջություն տվող պարգևներ

Նախագահ Այրինգն ասել է մեզ մի քանի պարգևների մասին, որոնք մեզ քաջություն են պարգևում: Կարդացեք ստորև տրված սուրբ գրությունները, և յուրաքանչյուրի դիմաց գրեք պարգևի անունը: Քննարկեք ձեր հայրիկի հետ, թե ինչպես կարող է այդ պարգևը ձեզ քաջություն տալ:

1. Գործք ԻԲ.16 _____

2. 2 Նեփի 4.15 _____

3. ՎԱՈ 59.8–9 _____

4. 2 Նեփի 32.5; Հովհաննես ԺԴ.26–27 _____

5. Ա Թեսաղոնիկեցիս Ե.17 _____

© 2009 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Printed in USA. Անգլերենի հաստատումը. 6/09: Թարգմանության հաստատումը. 6/09: *First Presidency Message, March 2010* -ի թարգմանությունը: Armenian 09363 201

Զորացնել հավատքն առ Հայր Աստված և Հիսուս Քրիստոս սուրբ գրությունների անձնական ուսումնասիրության միջոցով

Ուսուցանեք այս սուրբ գրություններն ու մեջբերումները կամ, անհրաժեշտության դեպքում, մեկ այլ սկզբունք, որը կօրհնի այն քույրերին, որոնց դուք այցելում եք: Վկայություն բերեք վարդապետության մասին: Նրանց, ում այցելում եք, հրավիրեք կիսվել իրենց զգացմունքներով և սովորածով:

«Երբ ես նոր հարս էի, . . . ինձ հրավիրեցին ճաշի, որը մեր ճյուղի Սփոփող Միության բոլոր քույրերի համար էր, ովքեր կարդացել էին կամ Մորմոնի Գիրքը կամ Եկեղեցու պատմության փոքր գրքույկը: Ես կանոնավոր չէի սուրբ գրքերը կարդալիս, այնպես որ կարողացա մասնակցել ճաշին, կարդալով փոքր գրքույկը, քանի որ հեշտ էր կարդալ և ժամանակ քիչ էր պահանջում: Մինչ ես ճաշում էի, մի զորավոր զգացում պատեց ինձ, որ չնայած պատմության գրքույկը լավն էր, ես պետք է կարդացած լինեի Մորմոնի Գիրքը: Սուրբ Հոգին ինձ հուշեց, որ ես պետք է փոխեմ սուրբ գրքերը կարդալու իմ սովորությունը: Այդ նույն օրը ես սկսեցի կարդալ Մորմոնի Գիրքը, և այլևս չեմ դադարեցրել այն ընթերցելը: . . . Ամեն օր սուրբ գրքերը կարդալու շնորհիվ ես սովորեցի իմ Երկնային Հոր, Նրա Որդի Հիսուս Քրիստոսի և այն մասին, թե ինչ պետք է անեմ Նրանց նմանվելու համար: . . .

Յուրաքանչյուր կին կարող է ավետարանի վարդապետության ուսուցիչ լինել իր տանը, և Եկեղեցու յուրաքանչյուր կին ավետարանի գիտելիքի կարիք ունի որպես ղեկավար և ուսուցիչ: Եթե դեռևս չեք զարգացրել սուրբ գրքերը կարդալու սովորույթ, այժմ սկսեք և շարունակեք ուսումնասիրել, որպեսզի պատրաստ լինեք ձեր պատասխանատվություններին այս կյանքում և հավերժություններում»:[1]

Ջուլի Բ. Բեկ՝ Սփոփող Միության գերագույն նախագահ:

«Սուրբ գրությունների ուսումնասիրությունը կօգնի ամրացնել մեր վկայությունները և մեր ընտանիքի անդամների վկայությունները: Մեր երեխաներն այսօր մեծանում են, շրջապատված ձայներով, որոնք համոզում են նրանց ճիշտը թողնել և, փոխարենը, աշխարհի հաճույքներին հետամուտ լինել: Եթե նրանք չունեն ամուր հիմք Հիսուս Քրիստոսի ավետարանում, ճշմարտության մասին վկայություն և արդարակյաց ապրելու վճռականություն, նրանք հեշտորեն կենթարկվեն այդ ազդեցություններին: Մեր պատասխանատվությունն է՝ ամրացնել և պաշտպանել նրանց»:[2]

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն:

«Մենք ցանկանում ենք, որ մեր քույրերը լինեն սուրբ գրքերի մասնագետներ: . . . Դուք պետք է ծանոթ լինեք նրա հավերժական

Օգնություն այցելող ուսուցիչներին

Ձեր այցելության ընթացքում հարցեր տվեք և կիսվեք սուրբ գրությունների ձեր ներըմբռնումներով: Վկայություն բերեք, թե ինչպես են սուրբ գրություններն ամրապնդել ձեր հավատքը: Խնդրեք քրոջը, որին այցելել եք, կիսվել նրանով, թե ինչպես է սուրբ գրությունների ուսումնասիրությունն ամրացրել իր տունն ու ընտանիքը:

Անձնական պատրաստություն

Հովհաննես Ե.39
Բ Տիմոթեոս Գ.14–17
2 Նեփի 9.50–51; 31.20; 32.3–5
ՎԱՈ 138.1–11

ճշմարտություններին ձեր իսկ բարօրության համար, և ձեր երեխաներին և մյուսներին ուսուցանելու համար, ովքեր կլինեն ձեր ազդեցության ներքո»:[3]

«Մենք ցանկանում ենք, որ մեր տները օրհնվեն սուրբ գրությունների գիտակ քույրերով՝ լինեք դուք ամուրի, թե ամուսնացած, երիտասարդ, թե ծեր, այրի, թե ընտանիքով: Դարձեք սուրբ գրքերի մասնագետներ՝ ոչ թե մյուսներին ցածրացնելու, այլ բարձրացնելու համար»:[4]

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալ (1895–1985):

Հղումներ

1. Julie B. Beck, "My Soul Delighteth in the Scriptures," *Liahona,* May 2004, 107–9.
2. Thomas S. Monson, "Three Goals to Guide You," *Liahona,* Nov. 2007, 118.
3. Spencer W. Kimball, "Privileges and Responsibilities of Sisters," *Ensign,* Nov. 1978, 102.
4. Spencer W. Kimball, "The Role of Righteous Women," *Ensign,* Nov. 1979, 102.

© 2009 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Printed in USA. Անգլերենի հաստատումը. 6/09: Թարգմանության հաստատումը. 6/09: *Visiting Teaching Message, March 2010* -ի թարգմանությունը: Armenian 09363 201